ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 114

ք. Երևան 22.04.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինարարական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-10/7» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից):

04.03.2024թ.-ին կայացած նիստում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում արձանագրել է անհամապատասխանություններ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ առաջարկելով վերջինիս մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

11.03.2024թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 04.03.2024թ.-ին ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են մասամբ, մասնավորապես՝ Մասնակցի կողմից շտկման արդյունքում ներկայացված 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջը՝ որոշել է Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով գնահատել հրավերի պահանջներին անբավարար և մերժել վերջինիս հայտը տվյալ չափաբաժինների մասով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ